



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

30 հունվար 2013 թ. № 146 - Ա/1
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ
ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
19-րդ հոդվածի 4-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007
թվականի հուլիսի 12-ի № 825-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ բաժնի 11-րդ կետի 4-րդ
ենթակետի՝ հրամայում եմ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների
հաշվին իրականացվող երիտասարդական միջոցառումների անցկացման համար
կատարվող ծախսերի չափերը՝ համաձայն հավելվածի:

ՅՈՒ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
 ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ
 ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՉԱՓԵՐԸ

Երիտասարդական միջոցառումներ	Կատարվող ծախսերի չափերը
1. Պատվիրակությունների, հյուրերի ընդունելություն՝ մեկ հոգու համար <ul style="list-style-type: none"> 1) Մենդի հետ կապված ծախս (օրական) 3000 2) Հյուրանոցային ծախս 5000 3) Սուրճի ընդմիջման հետ կապված ծախս 1500 4) Արարողակարգային ճաշկերույթ (բանկետ) 3000 	
2. Թարգմանչական ծառայությունների վճար՝ մեկ թարգմանչի համար Թարգմանիչների (ուղեկցող անձանց) թիվը պետք է որոշվի պատվիրակության 5-ից ոչ ավելի անդամների համար՝ մեկ թարգմանչի (ուղեկցողի) հաշվով Գրավոր թարգմանությունների դեպքում (հայերենից ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և հակառակը)	Մեկ ժամվա համար՝ Սովորական թարգմանություն մինչև 5 000 Համաժամանակյա թարգմանություն՝ մինչև 22 000 Մեկ էջը A4 ֆորմատի՝ մինչև 5000 դրամ
3. Հուշանվեր՝ հայկական խորհրդանիշով՝ <ul style="list-style-type: none"> 1) Արտասահմանյան պատվիրակության ղեկավարի համար Մինչև 20 000 2) Հոբեյարի, ինչպես նաև փառատոնի և մրցույթի հաղթողների համար Մինչև 10 000 	
4. Միջազգային և հանրապետական գիտաժողովի, ֆորումի, սեմինարի, փառատոնի, մրցույթի գովազդային նյութերի պատրաստում (համապատասխան պատկերանիշով (լոգո) դաջված վերնաշապիկ, գլխարկ, պոլիէթիլենային պարկ, կրծքանշան, բեյջ, գրենական պիտույքներ)	Մեկ անձի համար՝ մինչև 15000
5. Ստեղծագործական, կազմակերպական և ուսուցողական անձնակազմերի հոնորար և աշխատանքի վարձատրություն (ոչ ավելի, քան ծրագրի ընդհանուր արժեքի 35%-ը ամբողջ ծրագրի ընթացքում)	
ա) Ծրագրի ղեկավարի (խորհրդատուի) հոնորար՝ ներառյալ հարկերը - մինչև 500.000 դրամ արժողությամբ ծրագրերի դեպքում	ամսական 66.200

	- 500.000–2,000.000 դրամ արժողությամբ ծրագրերի դեպքում	ամսական մինչև 132 000
	- 2,000.000 դրամից բարձր արժողությամբ ծրագրերի դեպքում	ամսական մինչև 198 400
բ)	Ծրագրի համակարգողի հոնորար (ներառյալ հարկերը) - 500.000 – 2,000.000 դրամ արժողությամբ ծրագրերի դեպքում	ամսական մինչև 120.000
	- 2,000.000 դրամից բարձր արժողությամբ ծրագրերի դեպքում	ամսական մինչև 160.000
գ)	Ծրագրի հաշվապահի հոնորար (ներառյալ հարկերը) - մինչև 500.000 դրամ արժողությամբ ծրագրերի դեպքում	ամսական 66.200
	- 500.000 – 2,000.000 դրամ արժողությամբ ծրագրերի դեպքում	ամսական մինչև 80.000
	- 2,000.000 դրամից բարձր արժողությամբ ծրագրերի դեպքում	ամսական մինչև 120.000
դ)	Երիտասարդության ոլորտում գործող ծրագրերի շրջանակում սպասարկման աշխատանքներ (ներառյալ հարկերը) - Կայքի ադմինիստրատոր	ամսական մինչև 160.000
	- Խմբագիր/սրբագրիչ	ամսական մինչև 110.000
	- Ծրագրավորող	ամսական մինչև 150.000
	- Լրագրող	ամսական մինչև 100.000
	- Ֆոտո/վիդեոնկարահանող	ամսական մինչև 100.000
	- այլ սպասարկող անձնակազմ	ամսական 66 200
ե)	Ծրագրի փորձագետի հոնորար մեկ ծրագրի փորձագիտության համար	Մեկ ծրագրի փորձագիտական գնահատման համար 15.000, ոչ ավել, քան ամսական 150 000 դրամ
զ)	Հոբելյանական երեկոյի, փառատոնի, մրցույթի, ստուգատեսի, միջոցառման իրականացում՝ - նախագիծ, սցենար	Մինչև 200.000

	<ul style="list-style-type: none"> - ժյուրիի անդամ - նկարիչ (դիզայներ) - լուսանկարչական ծառայություն 	<p>1 օրը 5000 դրամ</p> <p>Մինչև 200.000</p> <p>մինչև 30.000 (մեկ միջոցառման սպասարկման համար)</p>
է)	Ուսուցողական ծրագրերի և վարպետության դասերի անցկացման՝ ուսուցիչ/վարպետ/դասընթացավար/հեռաուսուցման դասընթացավար/մասնագետ	մեկ ժամվա համար 2400-3500
6.	<p>Տպագրական ծախսեր՝</p> <ul style="list-style-type: none"> - ծալաթերթի (բուկլետ) պատրաստում, ձևավորում - հրավիրատոմսի պատրաստում - պատվոգիր - դիպլոմ - պաստառ 	<p>1 հատը 250 դրամ</p> <p>1 հատը 800 դրամ</p> <p>1 հատը 500 դրամ</p> <p>1 հատը 2000 դրամ</p> <p>1 քմ՝ մինչև 6000 դրամ</p>
7.	Տեսանկարահանման ծառայություն (տեսահոլովակներ, տեսաֆիլմեր, անիմացիա)	Մինչև 30 րոպե տևողությամբ՝ մինչև 1,300.000 դրամ
8.	<p>Ծաղիկների ձեռքբերում՝</p> <ul style="list-style-type: none"> - ծաղկեփունջ - ծաղկեպսակ 	<p>մեկ հատը մինչև 7.000 դրամ</p> <p>մեկ հատը մինչև 25.000 դրամ</p>
9.	Ֆուրջետի կազմակերպում՝ կապված արտասահմանյան պատվիրակությունների ու հյուրերի՝ Հայաստանում ընդունելության, հորեյանների, միջազգային և հանրապետական նշանակություն ունեցող երիտասարդական միջոցառումների անցկացման հետ	Մեկ անձի համար մինչև 2000 դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Մ.ԱՆԱՆՅԱՆ